

ԴԵՂԻՆ ԾԽԱԽՈՏ

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ



ԳՆԱԿՈՏԵԽՆ
ԻՆՏԻՏՄԻ
ԲՈՏՈՆՈՎԱԴԱՆԻ
Ասոցիация Наук
СССР

633.71
Ա. 21

35-Ա
ՍԳԳԳ

ԱՍԵՀ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՅ JUL 2010

633.71

Ա-Ձ1

ԴԵՂԻՆ ԾԽԱԽՈՏԻ

ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ա. ԶԵՐՆԵՆԸ
Գյուղատնտ. բաժին
Բազու — 1935

19.432

JAN 2013

ՔԱՂՎԱԾԲ

ԱՍԽՀ հողագործության ժողովրդական կոմիսարիատի 1935 թվի
հունվարի 28-ի, № 17 վորուումից

1. ՀԱՍՏԱՏԵԼ ձխախոտային բաժնի ներկայաց-
րած՝ ձխախոտի ագրոկանոնները, վոր մշակվել են
ձխախոտային շրջաններում:

2. Առաջարկել ձխախոտային շրջանների բոլոր
շրջհողբաժիններին և ՄՏԿ՝ պարտադիր կերպով ղե-
կավարվել ձխախոտի ագրոկանոններով:

ԱՍԽՀ Հողագործության ժողովրդական կոմիսսարի
տեղակալ՝ Բիրյուցեվ



60644-67

I ԾԽԱԽՈՏ ՅԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՅԵՎ ՀՈՂԱ- ԲԱԺԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծխախոտը քմահաճ բույս չէ, կարող է բուսնել համարյա ամեն տեսակի հողերում. բայց լավ վորակի ծխախոտ ստանալու համար հողի ընտրութիւնն առանձնապէս կարեւոր նշանակութիւն ունի:

ա) Ծխախոտ ցանելու համար առաջին հերթին պիտի հատկացնել թեթև հողեր՝ մանր կոպիճի կամ խճի և վորոշ քանակութեամբ բուսահողի խառնուրդով, բուսահողով վոչ հարուստ, ավազախառն հողեր:

Յերկրորդ հերթին՝ բոլոր մնացած հողերը, բացի ծանր կավահողերից, չափազանց խոնավ ցածրավայրի հողերից, շոր հողերից և ցրվող ավազներից:

բ) Ծխախոտ աճեցնելու համար լավագույն նախապայմաններ են համարվում, յերբ հողը նոր է արմատներից մաքրված, կամ խամ է, ապա յերկար ժամանակ չհերկված հողերը, արոտատեղիները, խոտահարքերը, կերախոտերի ցանքսից և, վերջապէս, հացահատիկի ցանքսից ազատված հողերը:

II. ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ

ա) Առաջին հերկը (ցել) պիտի կատարել աշնանը (հոկտ. 1-ից մինչև դեկտ. 1-ը), ծայրահեղ դեպքում վաղ գարնանը (հունվար—մարտ), 16—18 սանտիմետր խորութեամբ:

բ) Աշնան կամ ձմրան ցելը վաղ գարնանը, առաջին հնարավորության դեպքում, խոնավություն հավաքելու և մոլախոտերի դեմ պայքարելու նպատակով պետք է ցաքանել մեկ-յերկու անգամ:

գ) Յերկրորդ հերկը 10-12 սանտիմետր խորությամբ պետք է անել տնկելուց 10-15 որ առաջ և հետո ցաքանել մեկ-յերկու անգամ տնկելու նախորդակին:

Ծանոթություն.— Ծխախոտ ցանելու համար պատրաստված դաշտը ամբողջ ժամանակ պետք է մոլախոտերից մաքուր պահել:

դ) Արմատներից մաքրած հողերը, կոճղերը հավաքելուց հետո՝ անմիջապես պետք է հերկել, համեմայն դեպս ապրիլի 15-ից վոչ ուշ:

III. ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

ա) Հանքային պարարտանյութերը ծխախոտի տակ պետք է լցնել չոր գրությամբ՝ հաշվելով մի հեկտարին 150 կիլոգրամ ծծմբաթթվային ամոնիում (30 կիլոգրամ ազոտ) և 320 կիլոգրամ սուպերֆոսֆատ (45 կիլոգրամ ֆոսֆորային թթվատ), ծխախոտը տնկելուց 10-15 որ առաջ, հողի վերջին հերկումի հետ միաժամանակ պետք է նաև պարարտանյութը ցանել 10-12 սանտիմետր խորությամբ:

Ծանոթություն 1.— Ծծմբաթթվային ամոնիումը և սուպերֆոսֆատը պետք է հողի մեջ մտցնել խոնած իրար հետ և լավ մանրացրած վիճակում:

2.— Սուպերֆոսֆատը և բորակը խոնել չի կարելի:

IV. ԾԽԱԽՈՏԻ ՍԱԾԻԼԻ ԱՃԵՑՈՒՄԸ

1. Ձերմոցների տիպը և հարաբերակցությունը սահմանել (բոլոր շրջանների համար)—

Ապակու տակ առանց տաքացնող շերտի, 25%
Գետնածու 75%
Նախիջևանի ՍԽՀ համար՝
Ապակու տակ առանց տաքացնող շերտի . 50%
Գետնածու 50%
Բոլոր շրջանների համար պարտադիր են ծածկոցներ՝ տնկարանի ամբողջ տարածության վրա:

2. Տնկարանի սեղի ընտրությունը. — Տնկարանի հատկացվող հողամասերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

ա) Հողամասի հողը պետք է թեթև լինի, բավականաչափ փխրուն, անձրևի և վոռոգման ջրի ավելցուկը լավ անցկացնի: Ծանր կավահողային հողերը, վորպես ավելի սառն և ջրի ավելցուկը գետնի մեջ վատ բաց թողնող տնկարանի համար պետքական չեն:

բ) Հողամասերը պետք է պաշտպանված լինեն հյուսիսային և արևելյան սառը քամիներից, վորոնք քամհարում և չորացնում են մատղաշ ծիլերը: Դրա համար հողամասերը պետք է ընտրել հարավային և հարավ արևմտյան թեթև լանջերում. յեթե տեղն ուղիղ է և բաց՝ տնկարարները կարելի յե պաշտպանել յեղեգներից, ցախից կամ ուրիշ նյութից շինած ավելի բարձր ցանկապատով: Արմատախիլ արած և կոճղերից մաքրած տեղում տնկարան շինելիս անհրաժեշտ է փայտյա պաշտպանող շերտեր թողնել:

գ) Տնկարանի տեղը ամբողջ որվա ընթացքում պետք է լուսավորվի արեգակով:

դ) Հողամասերը պետք է լիովին ապահովված լինեն վոռոգման ջրով:

յե) Տնկարանները համար տեղ ընտրելիս պետք է խուսափել չորացնող սրահների, բանջարանոցների մոտիկութունից՝ ծխախոտի վարակիչ հիվանդութունների տարածումից խուսափելու համար:

3. Հողի մեակուսը յեվ նյութերի պահպանումը. Հողի հերկումը կամ փորումը, աննդատու միջոցներ (գոմաղբ, բուսահող, ավազ, անտառային հող և այլն) և տնկարանների համար այլ նյութեր (ծածկոցներ, շրջանակներ, հիվանդութունների և վնասատուների դեմ կովելու միջոցներ և այլն) պիտի պատրաստել աշնանից, ծայրահեղ դեպքում ձմեռային շրջանում (հոկտ. 15-ից մինչև փետրվ. 15-ը): Գարնան, առաջին հնարավորութեան դեպքում, պետք է նորից հերկել կամ փորել և ապա ցաքանել կամ փոցխով հարթել:

4. Սննդաբար միջավայրեր. — Ծխախոտի սածիլներն աճեցնելու համար վորպես աննդարար միջավայր կարելի է գործադրել՝ ա) գոմաղբային բուսահողը, բ) անտառային հողը, գ) գետի ավազները, դ) ջրերի բերած հողերը, յե) բուսահողային և պողպատ հողերը:

Տվյալ շրջանում վերհիշած միջավայրը լինելու դեպքում ընտրել այս կամ այն միջավայրը և գործադրել դրանք կամ միմյանց հետ խառնած կամ ինքն իրեն. վորպես որինակ հանձնարարվում են հետևյալ խառնուրդները.

ա) անտառային բուսահող	.	.	50%
սովորական հող	.	.	25%
ավազ	.	.	25%
բ) անտառային բուսահող	.	.	70%

ավազ 30%

գ) սովորական կամ անտառային հող	.	.	.	80%
լավ վորակի	.	.	.	20%
ավազ	.	.	.	20%

Սերմը պետք է ծածկել (թաղել) բուսահողով՝ 25% սովորական հողի հետ խառնած:

5. Մեկ հեկտար տունկի ջերմոցների սարածութունը (բոլոր շրջանների համար).

ա) ապակեծածկ ջերմոցների համար—45 քառակուսի մետր:

բ) գետնածոկների համար 60 քառ. մետր (հաշվելով նաև 20% պահեստի ֆոնդը):

6. Ջերմոցների պահպանումը. — Սերմը թաղելուց հետո պետք է հողի մեջ մտցնել հանքային պարարտանյութեր չոր վիճակում՝ հաշվելով 1 քառ. մետր ոգտակար տարածութեան համար՝

Ծմբաթթվային ամոնիում (20%) — 5 գրամ

Սուպերֆոսֆատ (14%) — 7 գրամ:

Հետագայում պետք է պարարտանյութերը տալ վորպես պարարտացուցիչ վոռոգում (սածիլի աճման ընթացքում 2 անգամից վոչ պակաս), ամեն անգամ 1 քառ. մետրին 5 գրամ ծմբաթթվային ամոնիում:

Նայած թե ինչ զրույթյան մեջ է սածիլը՝ պարարտացուցիչ վոռոգման ժամանակ պետք է տալ նաև սուպերֆոսֆատ ամեն անգամ մեկ քառ. մետրին 7 գրամ, աճման ընթացքում 2—3 անգամ:

7. Մեկ քառ. մետր ոգտակար սարածութեան վրա սերմ ցանելու նորմաները.

ա) ապակեծածկ ջերմոցներ—0,8 գրամ,

բ) գետնածոկներ . . . —1,0 գրամ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն . — Նորման հաշված է այն պայմանով, յեթե ցանքը կատարված է ճիշտ ու կանոնավոր:

8. Ծխախոսի սերմը ցանելու ժամկետները (բուրբ շրջանների համար).

ա) ապակեծածկ ջերմոցներում փետրվ. 25-ից մինչև մարտի 15-ը.

բ) գետնածուներում՝ մարտի մեկից մինչև 25-ը՝ Նախիջևանի ՍՍՀ համար՝

ա) ապակեծածկ ջերմոցներում մարտի 1-25:

բ) գետնածուներում մարտի 5-ից մինչև ապրիլի 15-ը:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն . — 1. Ցանքն անպատճառ պիտի կատարել Համամիութ. ծխախոս. արդյունաբերական ինստիտուտի ազնվացեղ սերմերով:

2. — Սերմը ցանելուց հետո պետք է վրան ցանել 0,5 սանտիմետր հաստությամբ մի հավասար շերտ մաղած բուսասնող և ապա թեթև ձեծել (նստացնել):

9. Սերմը ցանելու սեխնիկան.

ա) Սերմը պետք է ցանել ձեռքով՝ չոր կամ ձրլեցրած դրուժյամբ, նայած յեղանակի պայմաններին, այլև նայած, թե վորքան վաղ և ուշ է պահանջվում սածիլը:

բ) Մակերեսի վրա սերմերն ավելի համաչափ փոելու համար՝ պետք է խառնել աննդարար խառնուրդի հետ:

10. Սածիլի խնամքը յեվ սնկելու համար պահանջները.

ա) Աճման առաջին 12-15 օրերում սածիլը պետք է ջրել որական 2 անգամ՝ առավոտյան վաղ և յերեկոյան մինչև արևի մայր մտնելը, հաշվելով 1 քառ.

մետրին մոտ 3 լիար ջուր՝ նայած հողի խոնավության:

Մինչև հասունանալու մոմենտը՝ որական մեկ անգամ, մոտ 4 լիար 1 քառ. մետրին:

Սածիլի հասունանալ սկսվելու շրջանում և մինչև առաջին քաղվածքը՝ որումեջ, մեկ քառ. մետրին 4—5 լիար:

Սածիլի քաղվածքի սկզբից՝ յերեկոյան, քաղելու նախորդ օրը:

բ) Տնկարաններում քաղհան անել՝ մոլախոտերն յերևալուն պես, բայց սածիլի աճման շրջանում քաղհանը կատարել յերկու անգամից վոչ պակաս:

գ) Սածիլը պիտի շվաքավորել ծածկոցներով կամ խսիրներով, կտավով, վոռոգումը քչացնելու, սածիլի ծիլերը այրվելուց պահպանելու, իսկ խոշոր սածիլները թոշնելուց պաշտպանելու, նպատակով:

դ) Աճման ընթացքում սածիլների վրա սննդարար խառնուրդ պիտի ցանել 2—3 անգամ՝ սածիլի աճումն արագացնելու և արմատներն ամրացնելու նպատակով:

յե) Սածիլը պիտի նոսրացնել միայն այն դեպքում, յեթե սածիլները շատ խիտ են դուրս յեկելը: Պոկելուց հետո անպայման պիտի սննդարար խառնուրդ ցանել և ջրել:

11. Ջերմոցներում վնասատուների յեվ հիվանդությունների դեմ պայքարելու միջոցները.

ա) Ցանելուց առաջ տնկարաններում պետք է անպայման դնել թունավորած խայծեր (պրիմանկա): Իբրև թուն պիտի բանեցնել Փարիզյան կանաչ կամ սպիտակ մկնդեղ՝ հաշվելով խայծի քաշի 10% -ը:

Խայծը պատրաստվում է ցորենի կամ յեգիպտացորենի յեփած հատիկներից:

բ) Սածիլի հիվանդանալու առաջն առնելու նպատակով պետք է ամեն մի տասնորյակում սածիլի վրա ցանել բորբոյան հեղուկ՝ առաջին անգամ $1\frac{1}{2}\%$ -ային և հետագայում— 1% -ային լուծույթով:

գ) Սածիլի վրա հիվանդություններ յերևալու դեպքում՝ ոջախների վրա ածել պղնձարջասպի 3% -ային լուծույթ:

դ) Տնկարանի հողամասերը պետք է մոլախոտերից մաքուր պահել:

յե) Սածիլը դաշտում տնկելու համար քաղելուց և մնացած սածիլները հեռացնելուց հետո՝ տնկարանները պետք է մաքուր պահել մոլախոտերից և այնտեղ սև ցել անել:

12. Սածիլի փաղերը.

ա) Սածիլը քաղելուց յերկու որ առաջ տնկարաններն անպատճառ պետք է ցանել բորբոյան հեղուկ՝ սածիլի հիվանդությունը դաշտ փոխադրելու առաջն առնելու համար:

բ) Ձերմոցներից սածիլը միանգամից՝ իրար հետևից չպիտի քաղել, այլ շոկելով քաղել մի քանի անգամ, հենց վոր սածիլը հասունանա:

V. ԾՆԱԽՈՏԻ ՏՆԿՈՒՄԸ

1. Հողի նախացանքային մշակումը (դաշտը տախտակների բաժանելը, մարգոսելը և ջրելը) պետք է կատարել ծխախոտը տնկելու նախորդակին:

2. Պետք է տնկել միայն հասունացած, առողջ, նորմալ, 5 իսկական տերև ունեցող սածիլները:

3. Ծխախոտի սածիլը պետք է տնկել հատուկ բրիչի ոգնությամբ: Թեթև կամ ծանր, բայց լավ մշակված հողերում կարելի յե տնկել առանց բրիչի:

4. Տնկելու ժամկետները.

ա) բոլոր շրջանների համար ապրիլի 25-ից մինչև հունիսի 10-ը:

բ) Նախիջևանի ՍՍՀ համար մայիսի 15-ից մինչև հունիսի 15-ը:

5. Տնկելու խտությունը.

ա) խոշոր տերևավոր ծխախոտի համար 60-70 սանտիմետր \times 25—20 սանտիմ.

բ) մանր տերևավոր ծխախոտի համար 60 սանտիմ. \times 20 սանտիմ.

VI. ԾՆԱԽՈՏԻ ԽՆԱՄԲԸ ԴԱՇՏՈՒՄ

1. Առաջին քաղհանը և փխրեցումը պիտի կատարել նայած դաշտի դրությանը, բայց ծխախոտը տրնկելուց հետո 10 որից վոչ ուշ:

2. Յերկրորդ քաղհանը, փխրացումը և թեթև կերպով բուկը տալը պետք է կատարել առաջին քաղհանն ավարտելուց 10—15 որից վոչ ուշ:

3. Յերրորդ քաղհանը և փխրացումը պիտի կատարել, յեթե հողը խտանում է անձրևից հետո և յեթե մոլախոտեր են յերևում:

4. Պետք է ջրել տնկելիս և 2—3 անգամ ծխախոտի աճման շրջանում: Նախիջևանի ՍՍՀ-ում պիտի 4—6 անգամ ջրել:

5. Գազաթը կտրելը (ծաղկեփնջի պոկելը) պիտի կատարել 2 նվազ՝ առաջին անգամը, յերբ բույսերը

40—60% ով ծաղկում են և յերկրորդ անգամ, յերբ ծաղկում են մնացած բույսերը: Շատ պարարտ հողերում գագաթը կտրվում է ավելի ուշ՝ լիովին ծաղկելու դեպքում:

6. Խորթ շյուղերը պիտի կտրել հենց վոր խորթ շյուղեր գոյանան՝ 2 անգամից վոչ պակաս, թույլ չտալով խորթ շյուղերի 10 սանտիմետրից ավելի յերկարանալը:

7. Պայքար հիվանդությունների յեվ վնասանուների դեմ դաճում:

ա) Յեթե ծխախոտի տունկերի վրա գաղձ և կաղընձնի կա պետք է ծխացնել մինչև նրանց ծաղկելը, վորպեսզի նրանց սերմեր չհասունանան ու թափվին ու ել ավելի չտարածվեն:

բ) Հիվանդություններ (բակտերային կեռնեխ, մոզահիկա և այլն) յերևալու դեպքում բոլոր նախազգուշական միջոցները ձեռք առնել հիվանդությունները տարածվելու դեմ վորովհետև աշխատանքի ժամանակ, աշխատողները կարող են հիվանդ բույսերից հիվանդությունը փոխադրել առողջներին:

VII. Գ Ա Ղ Ը

1. Քաղի ժամկետներ

ա) Ծխախոտը պետք է քաղել տերևների տեխնիկական հասունացման շրջանում, վոչ մի դեպքում թույլ չտալով չափից ավելի հասունանալը կամ խակ դրությամբ քաղելը:

բ) Ծխախոտի քաղելու սկիզբը վորոշվում է ատորին տերևների տեխնիկական հասունացմամբ:

գ) Քաղի վերջը սահմանվում է՝

Բոլոր շրջանների համար—սեպտեմբերի 20-ը, Նախիջևանի ԽՍՀ համար—հոկտեմբերի 1-ը:

2. Քաղի ագրոտեխնիկան

ա) Ծխախոտը պետք է քաղել բացառապես շարքերով—քաղերով:

Քաղերի թիվը սահմանվում է՝

Քչատերև ծխախոտինը (Տրապիզոն) . 4—5

Բազմատերև ծխախոտինը (Սամսուն) . 5—6

բ) Զի թույլատրվում միաժամանակ քաղել տարբեր քաղերի տերևները:

գ) Կանաչ ծխախոտը պետք է քաղել առավոտյան՝ ցողը վերանալուց հետո, յերեկոյան, նույնպես և գիշերը: Ամպամած որերը ծխախոտի տերևները պետք է քաղել ամբողջ որը:

դ) Թույլ չի տրվում ծխախոտի տերևները քաղել թե թոշնած և թե թաց դրությամբ:

յե) Ծխախոտը փոխադրելիս և սրահում պահելիս թույլ չտալ տաքանալու, մեքենական փրաստման և կեղտոտման յենթարկվելու:

3. Ծխախոտի տերևները քաղելուց վոչ ուշ քան մյուս որը թելի վրա պիտի շարել միևնույն տեսակի մի քաղից և միատեսակ հասունացած: Շարելու ժամանակ պետք է անպատճառ շոկել հիվանդոտ և մեքենայորեն փրաստած տերևները, վորոնք պետք է չորացվեն և մշակվեն առանձին:

4. Ծխախոտը պետք է ճորացնել թելի վրա շարած, հատակի վրա, վորը պիտի ծածկված լինի ծղոնոտով կամ այլ չոր նյութերով: Թաց, անձրևով կամ ցողով թրջված ծխախոտը չպիտի ճորացնել: Ծխա-

խոտը ճլորացնելիս թույլ չի տրվում շարանները մի շարքից ավելի դարսել: Յեթե ծխախոտը տաքանում է ճլորացնելիս՝ պետք է շարանների տեղը փոխել՝ ծխախոտը քամհարելու և սառեցնելու նպատակով:

5. Ծխախոտի չորացումը (արևի տակ)

ա) Արևի տակ չորացնելիս ճլորած ծխախոտով լցրած վագոնները կամ շրջանակները պետք է արևի տակ հանել առավոտները, ցողը վերանալուց հետո, և պետք է յերեկոյան տանել սրահը՝ չսպասելով վոր ողը խոնավանա:

բ) Ցերեկը վատ յեղանակի ժամանակ (սաստիկ քամի կամ անձրև) ծխախոտն ողում չպիտի պահել, ինչպիսի յեղանակ էլ վոր լինի:

գ) Ծխախոտը չորացնելու ժամանակ, թե սրահում թե սրահից դուրս շրջանակներում պետք է լավ պաշտպանել քամիների ազդեցությունից:

դ) Շրջանակներից ծխախոտը պետք է վերցնել միայն այն ժամանակ, յերբ լիովին չորացել է, թե տերևը և թե միջին ջիլը: Շարանները շրջանակներից պիտի վերցնել միայն այն ժամանակ, յերբ ծխախոտը մի քիչ յետ կգա և փխրուն չի լինի:

յե) Ծխախոտը պիտի պահել հավանկաներում, անպայման այնպիսի պայմաններում, վոր պաշտպանված լինի մթնոլորտային անբարենպաստ ազդեցությունից (մառախուղ, քամիներ, ցող և այլն):

6. Ծխախոտի չորացումը (կրակով)

ա) Կրակով չորացնելու համար պետք է ծխախոտը լիովին դարսել մեկ որում, պետք է վերցնել հա-

սունությամբ և քաղով միատեսակ աստիճանի ծխախոտ: Վոչ մի դեպքում թույլ չի տրվում լրացուցիչ կերպով դարսել:

բ) Շրջանակները (վագոնները) կրակով չորացնելիս պետք է դասավորել այնպես, վորպեսզի մի վագոնի շարանները չընկնեն մյուս վագոնի շարանների վրա (վագոնների միջև պիտի տարածություն մնա՝ ողի համաչափ շրջանառություն համար):

գ) Կրակով չորացնելիս ծխախոտը պիտի ճլորացնել 30°C ջերմաստիճանով և 85% -ից վոչ ավելի խոնավությամբ՝ մինչև վոր ծխախոտի տերևները դեղնավուն գույն ստանան, ապա՝ ճլորացնելն արագացնելու համար ջերմաստիճանն աստիճանաբար պիտի բարձրացնել 35° -ի, 75% խոնավությամբ:

դ) Կրակով չորացնելիս չի թույլատրվում ջերմաստիճանը $40-45^{\circ}\text{C}$ -ից բարձրացնել՝ քանի դեռ տերևաթերթը չի չորացել:

Տերևաթերթի չորանալուց հետո՝ միջին ջիլը պիտի շարունակել չորացնել $50-55^{\circ}\text{C}$ ջերմաստիճանով:


յե) Չորացման ժամանակ թույլ չպիտի տալ, վոր ջերմաստիճանն ընկնի:

զ) Կրակի յուրաքանչյուր չորանոցում պետք է ունենալ վոչ պակաս՝ մի ջերմաչափ ջերմաստիճանին հետևելու համար, և „Ավգուստի“ պիտոմետր՝ խոնավությունը վորոշելու համար:

VIII. ԾԽԱԽՈՏԻ ՄԵԱԿՈՒՄԸ ԲԵՐԲԻՅ ԳԵՏՈ

1. Տեսակավորումը յեվ հակ կապելը

ա) Տեսակավորելուց առաջ ծխախոտը պետք է խոնավացնել ողի խոնավության ազդեցությամբ կամ



հատուկ խոնավացնող ներքնատներում, մառաններում: Տեսակավորման և հակակապման համար պիտանի յեն համարվում այն տերևները, վորոնք ձեռքում սեղմելուց հետո հեշտությամբ ուղղվում են. թացերը պահպանում են նրանց տված ձևը (գունդ), չորերը փչրվում են:

Չպիտի հակ կապել չափազանց թաց ծխախոտը, նույնպես և չպիտի թաց տերևները հակի մեջ դրել վորպեսզի նա մուլթ գույն չստանա և չբորբոսնի բ) Ծխախոտը պիտի տեսակավորել և բեռնակապել ստանդարտի խիստ պահանջների համաձայն:



Թարգմանեց Ս. Գասպարյան
Խմբագիր Լ. Դանիելյան
Թողարկու և սրբագրիչ Ա. Արխան

Baş Mətbuat müdirliyi Myvəkilligi № 3661. Sifariş № 448. Tiraz 500.
İstehsalata verilmiş 13/V—35. Cəpə imzalanmış 4/VI—35. Cəp listi 1¹/₄.
Kağız formatı 82×110. Azərənəşr mətbəəsində basıldı. 26-lar adına
„Kitab Sarajı“ Bakı, Əli Bəjramov kycəsi.

« Ազգային գրադարան



NL0293589

№ 304.

19.432

uq
smo

720

m

ASŞ X. T. Q.

SARЬ TYTYNYN
beçərilməsi və saqlanılması

AZƏRNƏŞR
Kənt-təsərrüfat şöbəsi
Bakı—1935